Արձանագրություն N 2-2

ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/3 ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում Մալխաս և Ռոման Ամոյանների անվան նոր մարզադպրոցի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան

18.03.2026թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Նալբանդյան

Անդամներ՝ Ս. Գասպարյան
Ս. Իշխանյան
Էդ. Առուստամյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանուչարյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ Ա. Աչոյանը

1. Գնման ընթացակարգի մասնակցի հայտի ուսումնասիրության մասին

(Ա. Նալբանդյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվել է պատասխան գրությունը:

1.2 Գնման ընթացակարգի մասնակցի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ՝

«ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից հայտով չեն ներկայացվել

- Աշխատակազմի մասին տվյալները՝ հրավերի Հավելված N 1.2-ը,
- Համանման պայմանագիրը և հիմնավորող փաստաթղթերը:

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել «Սեյսմշին» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 19.03.2026թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումները ներկայացվելու դեպքում, հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի: Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-26/3 ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի a.manucharyan@minurban.am էլ. փոստին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4 դեմ-0:

2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Ա. Նալբանդյան)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 20.03.2026թ. ժամը 10:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Նալբանդյան

Անդամներ՝ ---------- Ս. Գասպարյան

---------- Ս. Իշխանյան

---------- Էդ. Առուստամյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ա. Մանուչարյան